9.2 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով:

9.3 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝

1) մասնակիցը ընտրված է ճանաչվում մեկից ավել չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ:

2) կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա պայմանագրի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

10. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

10.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

10.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

11. ԳՆՄԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

11.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

11.2 Գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

11.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ գրավոր դիմում ներկայացնելով՝ աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Մելիք-Աղամյան փող. 1 հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

11.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 7.24-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

11.5 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվին:

7) այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը.

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

11.6 Բողոքը, այդ թվում՝ մասնակի, բավարարվելու մասին բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշում կայացրած բողոքներ քննող անձը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետ վերադարձվող գումարը: Լիազորված մարմնինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին՝ ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

11.7 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 11.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

11.8 Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

11.9 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն

իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

11.10 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 10 օրացուցային օրով: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

11.11 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

11.12 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

11.13 Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

11.14 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը գրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

11.15 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշումն կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

11.16 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

11.17 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով և սույն հրավերի 11.13-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՄԱՍ II
Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Է Լ Ե Կ Տ Ր Ո Ն Ա Յ Ի Ն Ա Ճ ՈՒ Ր Դ Ի Հ Ա Յ Տ Ը
Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:
1.2 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

2.1 Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ձեռնարկով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Մասնակցի հայտը ներառում է՝

• ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի: Դիմում-հայտարարության ձևը մասնակիցը ներբեռնում է համակարգից: ՀՀ ռեզիդենտ՝

ա. հանդիսացող մասնակիցը դիմում-հայտարարությունը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Ընդ որում նշված դիմում-հայտարարությունը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում չի կնքվում:

Հաստատված դիմում-հայտարարությունը մասնակիցը ներբեռնում է համակարգ.

բ. չհանդիսացող մասնակիցը ստորագրում, իսկ կնիքի առկայության դեպքում նաև կնքում է դիմում հայտարարությունը, որի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը ներբեռնում է համակարգ.

2) ըստ չափաբաժինների նշված գնային առաջարկ, որում գումարը նշվում է միայն թվերով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով համակարգը հաշվարկում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Այդ նպատակով մասնակիցը պարտադիր կարգով գնային առաջարկում նշում է հարկի դրույքաչափը: Համակարգն ավտոմատ եղանակով գնային առաջարկում նշված թվերը ցույց է տալիս նաև տառերով: Վերջնական ձևավորված գնային առաջարկը՝ արտահայտված տառերով և թվերով, համակարգը ավտոմատ եղանակով ներկայացնում է մասնակցի հաստատմանը: Ընդ որում գնային առաջարկը մասնակիցը կարող է լրացնել և հաստատել միայն իր կողմից հաստատված դիմում-հայտարարությունը համակարգ ներբեռնելուց հետո սույն ընթացակարգի համար ստացված եզակի ծածկագիրը (PIN-կոդ) համակարգից ստանալուց հետո: Հայտը համարվում է համակարգի կողմից ընդունված, եթե մասնակիցը հաստատում է գնային առաջարկը:

2.2 Սույն ընթացակարգում հետագա գործողությունները, ներառյալ աճուրդի ընթացքում նվազեցվող գնային առաջարկների ներկայացումը, մասնակիցը կարող է իրականացնել բացառապես սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետում նշված եզակի ծածկագիրը (PIN-կոդը) օգտագործելու միջոցով: Ընդ որում եզակի ծածկագիրը (PIN-կոդը) մասնակցի գրանցահաշվում (համակարգում մասնակցի անձնական տիրույթ, պրոֆիլ) երևում է մեկ անգամ, որը ավտոմատ ուղարկվում է նաև համակարգում մասնակցի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին: Մասնակիցը պատասխանատու է ծածկագրի անվտանգության ու գաղտնիության, ինչպես նաև՝

այդ ծածկագրով համակարգում ցանկացած գործողություն իրականացնելու համար: Ծածկագիրը (PIN-կոդը) համակարգը տրամադրում է միայն մեկ անգամ և ենթակա չէ վերականգնման:

2.3 Մինչև հայտերի բացման վերջնաժամկետի լրանալը մասնակիցը կարող է համակարգի միջոցով չեղարկել իր հայտը և ուղարկել նոր հայտ, կամ հրաժարվել ընթացակարգին մասնակցելուց: Սույն կետի համաձայն ուղարկված նոր հայտի դեպքում համակարգը մասնակցին տրամադրում է նոր եզակի ծածկագիր (PIN-կոդ):

2.4 Աճուրդի փուլում մասնակիցը նվազեցվող գնային առաջարկները ներկայացնում է սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով՝ առանց դիմում հայտարարությունը համակարգ ներբեռնելու հանգամանքի:

3. ԱՈՒՋԻՆ ՏԵՂԸ ՉԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻԿ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

բ. հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝

գ. Մատակարարի/ներ/ կողմից մանկապարտեզներին տրամադրվող մասնաթերքը (տավարի միս, հավի բուրդ, հավի կրծքամիս) պետք է մորթի ենթարկված լինի միայն սպանդանոցներում, ինչպես նաև **28-31-րդ չափաբաժիններին** գնային առաջարկ կարող են ներկայացնել միայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում գրանցված սպանդանոցի հետ պայմանագիր ունեցող կազմակերպությունները: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները 143-146; 178-181 չափաբաժինների մասով որակավորման փաստաթղթերի հետ պետք է ներկայացնեն նաև պայմանագրի պատճենը:

դ. **(1-ին, 28-31-րդ, 71-րդ և 72-րդ չափաբաժինների մասով)** իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ՝ համաձայն հավելված N 6.2-ի: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտա-գործման իրավունքը հաստատող փաստաթղթերի, սննդամթերքի տեղափոխող փախադրամիջոցների համար սանիտարական անձնագրերի պատճենները.

2) ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը հանձնաժողովին ներկայացնում է իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը

ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.4 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նուտարական կարգով վավերացված օրինակները:

Հավելված N 1

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի
մասնակցել

մասնակցի անվանումը

Երևանի քաղաքապետարան-ի կողմից «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով հայտարարված
Էլեկտրոնային աճուրդի _____ չափաբաժին (չափաբաժիններին) և
հրավերի

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ
հանդիսանում է

մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:

երկրի անվանումը

_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է _____

:

մասնակցի անվանումը

հարկի վճարողի հաշվառման

համարը

Միաժամանակ սույնով ես՝ _____ -ի _____ տնօրեն

_____ -ս

մասնակցի անվանումը

տնօրենի (լիազորված անձի)

անուն ազգանունը

հայտարարում և հավաստում եմ, որ

- 1) «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին հայտով գնային առաջարկը ներկայացվել, իսկ աճուրդի ընթացքում նոր գնային առաջարկները ներկայացվելու են իմ կողմից:

2) _____ -ն բավարարում է 1) «ԵՔ-
ԷԱՃԱՊՁԲ-19/2»

մասնակցի անվանումը

Ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

3) _____ -ն 1) «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով

մասնակցի անվանումը

էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված՝ _____
 _____-ին

մասնակցի

անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _____
 -ի

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _____
 -ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև _____ -ն ներկայացնում է հայտը
 ներկայացնելու

մասնակցի անվանումը

օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)* և հավաստում է, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ

	Անունը Ազգանունը Վայրանունը	«Քաղաքացիների համար» նույնականացման քարտի կամ անձնագրի կամ «Օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

4) _____-ի կողմից 1) «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով

մասնակցի անվանումը

էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով սույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում

(չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

_____ -ն պարտավորվում է առաջին տեղը

մասնակցի անվանումը

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում 1) «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Միաժամանակ հաստատում եմ, որ էլեկտրոնային աճուրդի մասնակցության դիմում-հայտարարությունում, ինչպես նաև այսուհետ համակարգով սույն ընթացակարգի կամայական փուլում (գնառաջարկ, որակավորում, պայմանագրի կնքում և այլն) տրամադրված ամբողջ տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը: Հավաստում եմ նաև, որ տեղեկացված եմ, որ դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագիրը (PIN կոդը) հանդիսանում է փակ գաղտնի տեղեկատվություն, և որ պատասխանատու եմ ինձ տրամադրված ծածկագրի անվտանգության ու գաղտնիության, ինչպես նաև՝ համակարգում կատարված ցանկացած գործողության համար:

_____ (ստորագրությունը) _____ (Մասնակցի անվանումը) _____ (ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, անուն և ազգանունը)

Կ. Տ.

* Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների ստորագրությունները:

Հավելված 2
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

ԴԻՄՈՒՄ
առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող
փաստաթղթերի ներկայացման

_____ -ն, որպես «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2»

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը

ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, կից ներկայացնում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև.

- գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները,*
- համատեղ գործունեության պայմանագրի պատճենը**,
- սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը

:

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրություն

Կ. Տ.

* Եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

** Եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

Հավելված 3
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական

_____ -ն, որպես «ԵՔ-
ԷԱՃԱՊՁԲ-19/2»

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը

ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.

Հավելված 4
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N _____

Հ"Հ"

«___» _____ 20

թ.

Երևանի քաղաքապետարան-ը ի դեմս Էդգար Կիրակոսյան-ի, որը գործում է Երևանի քաղաքապետարան-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և _____-ը, ի դեմս տնօրեն _____-ի, որը գործում է

-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 :

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր

կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՎՈՐԹԱՎՈՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան Արգիշտիի փող. 1 011514194	----- /ստորագրություն/

Գանձապետարան 900002601913 02593108 Էդգար Կիրակոսյան ----- /ստորագրություն/ Կ.Տ		Կ.Տ
--	--	-----

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
 « » 20 թ. կնքված
 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								
հրավեր ով նախա տեսվա ծ չափաբ աժնի	գնումներ ի պլանով նախատես ված միջանցի կ ծածկագի	անվանումը	յն իսնիկական բնութագիրը	չափմա ն միավոր ը	միավո ր գինը/ ՀՀ դրամ	ընդհան ուր գինը/Հ Հ դրամ	ընդհան ուր քանակը	Մատակարարում

համարը	ընդ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)													
1	15811100/515	Հաց	<p>Յոթերորդի 1-ին տրեսակի պայրաստված, ՀՍ 31-99: Անվանագրությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին և «Սննդամթերքի անվանագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիրանեոլիտային մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %</p> <p>* Մաքակարարումն իրականացվում է ամենաշխատանքային օր ժամը 08:00-08:30 ընկած ժամանակահատվածում:</p>	կիրգրամ			18000	<table border="1"> <tr> <td data-bbox="1145 786 1225 1570">Հասցե</td> <td data-bbox="1225 786 1305 1570">Ենթակա քանակներ</td> <td data-bbox="1305 786 1418 1570">Ժամկետներ</td> </tr> <tr> <td data-bbox="1145 1570 1225 2022">Երևան</td> <td data-bbox="1225 1570 1305 2022">18000</td> <td data-bbox="1305 1570 1418 2022">Մինչև 2019թ. դեկտեմբեր ամսվա համար սահման</td> </tr> </table>	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ	Երևան	18000	Մինչև 2019թ. դեկտեմբեր ամսվա համար սահման
Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ												
Երևան	18000	Մինչև 2019թ. դեկտեմբեր ամսվա համար սահման												

			<p>** Հացի մատակարարման դեպքում փեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմանների անհամապատասխանությունի հայտգալու դեպքում անհամապատասխանության շրկման ժամկետ է սահմանվում 30 րոպե:</p> <p>*** Մատակարարումը կարարվում է մատակարարի միջոցների հաշվին նշված հասցեով:</p> <p>**** Նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից:</p> <p>***** Ընդունելի գիտություն, որ պայմանագիր կնքելուց հետո մատակարարը, «Մենդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում՝ ըստ</p>							ված վերջին աշխատանքային օրը ներառյալ
--	--	--	--	--	--	--	--	--	--	--------------------------------------

			<p>անհրաժեշտությամբ:</p> <p>*****</p> <p>Ընդունելի գիտություն, որ սննդամթերքը պեք է ենթարկված լինի համապատասխանության գնահատման համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՏՐԿ 021/2011) և «Սննդամթերքի մակնշման մասին» (ՏՐԿ 022/2011) փեյսիկակա ն կանոնակարգերով սահմանված ընթացակարգերի և մակնշված լինի Եվրասիական տնտեսական միության տարածքում շրջանառության միասնական նշանով:</p> <p>*****</p> <p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե որևէ գնման առարկայի հարկանիշները պահանջկամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էպիգրին</p>				
--	--	--	---	--	--	--	--

			<p>կամ մողելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին , ապա պետք է հասկանալ «կամ համարժեքը»:</p> <p>*****</p> <p>Ընդունելի գիտություն, մաթակարարումը պետք է իրականացվի արվյալ սննդամթերքի փրեղափոխման համար նախատեսված փրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք փրեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի փրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական</p>					
--	--	--	---	--	--	--	--	--

			անձնագրեր:"										
2	15612180 /504	Այուր	<p>"Ցո րենի այուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոպի: Առանց թափության և դառնության, առանց փրահորի ու բորբոսի: Խոնավությա ն զանգվածայի ն մասը՝ ոչ ավելի 15 %- ից, մեքադամագ նիսական խառնուրդներ ը՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածայի ն մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությու նը՝ առնվազն 28,0%: ՀԱՏ 280-2007: Անվտանգությ ունը և մակնշումը N 2-III-4.9-01- 2010 հիգիենիկ նորմատիվնե րի և</p>	կիրոգր ամ		450	<table border="1"> <tr> <td>Հասցե</td> <td>Ենթակ ա քանակ ներ</td> <td>Ժամկետ ներ</td> </tr> <tr> <td>Երևան</td> <td>450</td> <td>Մինչև 2019թ. դեկտեմ բեր ամսվա համար սահման ված վերջին աշխատ անքային</td> </tr> </table>	Հասցե	Ենթակ ա քանակ ներ	Ժամկետ ներ	Երևան	450	Մինչև 2019թ. դեկտեմ բեր ամսվա համար սահման ված վերջին աշխատ անքային
Հասցե	Ենթակ ա քանակ ներ	Ժամկետ ներ											
Երևան	450	Մինչև 2019թ. դեկտեմ բեր ամսվա համար սահման ված վերջին աշխատ անքային											

			<p>անվտանգության մասին» (ՏՐԴԸ 021/2011) և «Սննդամթերքի մակնշման մասին» (ՏՐԴԸ 022/2011) փեյսնիկակա ն կանոնակարգ երով սահմանված ընթացակարգ երի և մակնշված լինի եվրասիական փնտեսական միության փարածքում շրջանառության միասնական նշանով:</p> <p>*****</p> <p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե որևէ գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին , էպիգին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին , ապա պետք է հասկանալ «կամ համարժեքը»:</p> <p>*****</p> <p>Մափակարարումն իրականացվում է</p>				
--	--	--	--	--	--	--	--

			<p>շաբաթական երկու անգամ: Մաքակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուր քան 3 աշխատանքային օր առաջ) պարզերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:"</p>											
3	03221117/504	Ոլոռ	<p>"Թարմ, բարձր և I տեսակի կանաչ, առողջ կոթուններով, մինչև 50 կգ գործարանային պարկերով, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 70 %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Մանրամթերքի անվտանգություն»</p>	կիրգրամ			770	<table border="1"> <tr> <td>Հասցե</td> <td>Ենթակա քանակներ</td> <td>Ժամկետներ</td> </tr> <tr> <td></td> <td></td> <td></td> </tr> </table>	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ			
Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ												

			<p>յան մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:</p> <p>*</p> <p>Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին նշված հասցեով:</p> <p>** Նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից:</p> <p>*** Ընդունելի գիություն, որ պայմանագիր կնքելուց հետո մատակարարը, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում՝ ըստ անհրաժեշտության:</p> <p>**** Ընդունելի գիություն, որ սննդամթերքը պետք է ենթարկված լինի համապատասխանության գնահատման համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» (TPTC</p>					Երևան	770	Մինչև 2019թ. դեկտեմբեր ամսվա համար սահմանված վերջին աշխարհանքային օրը ներառյալ
--	--	--	--	--	--	--	--	-------	-----	--

			<p>021/2011) և «Մենդամթերքի մակնշման մասին» (TPTC 022/2011) փեխնիկական կանոնակարգերով սահմանված ընթացակարգերի և մակնշված լինի եվրասիական փնտեսական միության փարածքում շրջանառության միասնական նշանով:</p> <p>*****</p> <p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե որևէ գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին , էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին , ապա պեք է հասկանալ «կամ համարժեքը»:</p> <p>*****</p> <p>Մտփակարարումն իրականացվում է շաբաթական երկու անգամ: Մտփակարար</p>				
--	--	--	--	--	--	--	--

			ման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուր քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով։”											
4	15331180 /504	Ոլոռ պահածոյացված	<p>“Ոլոռ պահածոյացված, բաղադրությունը՝ կանաչ ոլոռ, ջուր, շաքար, աղ, ապակյա կամ մետաղյա փարաներով: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ</p>	կիլոգրամ			400	<table border="1"> <tr> <td>Հասցե</td> <td>Ենթակա քանակներ</td> <td>Ժամկետներ</td> </tr> <tr> <td></td> <td></td> <td></td> </tr> </table>	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ			
Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ												

			<p>պակաս քան 80 %:</p> <p>* Մաքակարարումը կադարվում է մաքակարարի միջոցների հաշվին՝ նշված հասցեով:</p> <p>** Նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից:</p> <p>*** Ընդունելի գիություն, որ պայմանագիր կնքելուց հետո մաքակարարը, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում՝ ըստ անհրաժեշտության:</p> <p>**** Ընդունելի գիություն, որ սննդամթերքը պետք է ենթարկված լինի համապարասխանության գնահատման համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» (TRTC 021/2011) և</p>					Երևան	400	Մինչև 2019թ. դեկտեմբեր ամսվա համար սահմանված վերջին աշխատանքային օրը ներառյալ
--	--	--	--	--	--	--	--	-------	-----	---

			<p>«Մենդամթերքի մակնշման մասին» (TPTC 022/2011) փեյնիկակա ն կանոնակարգերով սահմանված ընթացակարգերի և մակնշված լինի եվրասիական փնտեսական միության փարածքում շրջանառության միասնական նշանով:</p> <p>*****</p> <p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե որևէ գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին , էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին , ապա պետք է հասկանալ «կամ համարժեքը»:</p> <p>*****</p> <p>Մաքակարարումն իրականացվում է շաբաթական երկու անգամ: Մաքակարարման կոնկրետ</p>				
--	--	--	---	--	--	--	--

			<p>օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուր քան 3 աշխատանքային օր առաջ) պարզվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով։”</p>											
